FÉDA FORUM ECONOMIQUE POUR LE DÉVELOPPEMENT DE L'ARMÉNIE



Հայաստանի Զարգացման Տնտեսական Ֆորում

Հայ գործարարության կենտրոնը Եվրոպայի սրտում

www.feda-europe.eu

Մեր մասին

- Հայաստանի Տնտեսական Զարգացման Ֆորումը ոչ-պետական կազմակերպություն է, որի նպատակն է զարգացնել Հայաստանի և Մաքսային Միության երկրների՝ մի կողմից, և Եվրոպական երկրների՝ մյուս կողմից, տնտեսական հարաբերությունները

- FEDA-ն տնօրինում է 3,800քմ մակերեսով ժամանակակից բիզնեսի և ցուցահանդեսների կենտրոն, որը գտնվում է մի քանի րոպե հեռավորության վրա ժնևի միջազգային օդակայանից, Մասնավոր ինքնաթիռների ավիապարկից, ժնևի երկաթուղային կայարանից, Միջուկային հետազոտությունների եվրոպական կենտրոնից (CERN): Կենտրոնն ունի 60 գրասենյակ (15-25քմ), 300 հոգանոց կոնֆերանս սրահ, 10 հանդիպումների սրահ

- FEDA-ն տրամադրում է անհրաժեշտ ենթակառուցվածքներ և խորհրդատվություն Եվրոպայում բիզնես զարգացնելու համար: Մենք հայ գործարարի համար բացում ենք եվրոպական և շվեյցարական շուկաները



ԺՆԵ՝ 500-ամյա պատմությունով ֆինանսական կենտրոն...

Մեր առաքելությունը

- Եվրոպայում հուսալի ներկայացուցչության ստեղծում Հայաստանի և Մաքսային Միության գործարարների, ինչպես նաև այլ երկրների հայազգի գործարարների համար, եվրոպական շուկայում նրանց առաջխաղացման նպաստում

- Դեպի Հայաստան և Արցախ ուղղակի և անուղղակի ներդրումների խթանում՝ մեր երկրի հնարավորությունները լավագույնս բացահայտելու և ներկայացնելու, ներդրումային ռիսկերը բարձրակարգ խորհրդատվության միջոցով նվազեցնելու միջոցով

- Հայաստանի տնտեսության և մրցունակության զարգացում՝ հայկական ապրանքների և ծառայությունների արտահանումը եվրոպական շուկա խթանելու միջոցով



...Եվրոպայի սրտում

Մեր հաջողության գրավականը՝ Սփյուռք

- Ժամանակակից աշխարհում հաջողության գրավական են տնտեսությունն ու ինֆորմացիան: Այս տեսանկյունից մենք հսկայական ներուժ ենք տեսնում թե՛ Հայաստանում, թե՛ աշխարհով սփռված մեր հայրենակիցների մեջ

- Գլոբալիզացիան բացել է նոր հնարավորություններ՝ միջազգային առևտուր, մարդկանց և կապիտալի ազատ հոսքեր, գիտելիքի և միջազգային ցանցերի վրա հիմված տնտեսություն, ժամանակն ու տարածությունը վերացնող ինֆորմացիոն դաշտ

➢ Ավելացրեք սրան աշխարհի բոլոր անկյուններում տարբեր բնագավառներում գերազանց դիրքերի հասած մեր 8 միլիոնանոց սփյուռքը և կտեսնեք միջազգային ասպարեզում մեր ազգի դերը նոր մակարդակի բարձրացնելու աննախադեպ հնարավորություն



Հայկական սփյուռքն աշխարհի տարբեր երկրներում

Սփյուռքի դերը Հայաստանի տնտեսության մեջ անգնահատելի է

- Հայաստան Համահայկական Հիմնադրամի, այլ կազմակերպությունների, ինչպես նաև անհատ բարեգործների կողմից իրականացրած միլիոնավոր դոլարների հանրային ծրագրերը ցույց են տալիս, որ մենք կարող ենք համախմբել մեր ուժերը հայրենիքի շենացման գործում

- Հայաստան մտնող տրանսֆերտային միջոցների զգալի ծավալները նույնպես խոսում են արտասահմանում ապրող և աշխատող հայերի՝ հայրենի խնդիրներում ներգրավվածության մասին

- Անհատ սփյուռքահայ գործարարների դերը հսկայական է դեպի Հայաստան և Ղարաբաղ ներդրումների իրականացման գործում

Հայաստան Համահայկական Հիմնադրամ, Թելեթոն 2012

Բայց այս տեսակի ներգրավվածություն ունի սահմանափակումներ

- Բարեգործություն իրականացնելու հնարավորություն ունեցող անհատների թիվը սահմանափակ է
- Տրանսֆերտային և բարեգործական միջոցներով հետագա տնտեսական ակտիվություն ապահովելու, հայաստանցիին առավել արդյունավետ և մրցունակ աշխատող դարձնելու հնարավորությունները՝ ևս
- Անհրաժեշտ ինֆորմացիայի, կապերի, վստահության և ժամանակի բացակայության պատճառով սփյուռքի բազմաթիվ գործարարներ չունեն հնարավորություն Հայաստանում ներդրումներ իրականացնելու

Սպյուռքի ներուժն ավելին է քան բարեգործությունն տրանսֆերտները

- **Առևտուր և կապեր** – սփյուռքը կարող է ստեղծել կապ սպառողների և արտադրողների միջև հայրենիքում և արտասահմանում, ներկայացնել իր երկրի ապրանքը նոր շուկաներում
- **Ներդրումներ** – սփյուռքը կարող է ներդրումներ կատարել հայրենիքում, նաև՝ ներգրավել օտար ներդնողին՝ ներշնչելով վստահություն և ապահովելով շուկայի իմացություն
- **Գիտելիք և փորձ** – սփյուռքն ունի արժեքավոր փորձ, գիտելիք ու կապեր, որոնք ևս կարող են հանդիսանալ “տրանսֆերտի” առարկա

➢ Այս առավելությունների ճիշտ կիրառումը կարող է հակակշռել արտագաղթի վնասակար հետևանքները և նույնիսկ կանխել այն

Անհրաժեշտ է սփյուռքի գործարար և ազգային շահերի լայնամասշտաբ համատեղում

- Սրա փորձն այլ ազգերն արդեն ունեն
  - Սփյուռքի պարտատոմսերի միջոցով Իսրաելին մինչ օրս հաջողվել է հավաքել ավելի քան $25 միլիարդ՝ միջինը՝ տարեկան 4-6% տոկոսադրույքով
  - Ոչ-ռեզիդենտ հնդիկների ավանդային հաշիվներում ներգրավվել է Հնդկաստանի արտաքին պարտքի 1/3-ին համարժեք միջոցներ
  - Արտասահմանի սենեգալցիների ներդրումային ֆոնդը ֆինանսավորել է 804 ծրագիր ավելի քան $40 միլիոն արժողությամբ

Շուտով այդ փորձը կունենանք և մենք

- Մենք նախաձեռնում ենք առաջին համահայկական գյուղատնտեսական ներդրումային ծրագիրը, որը հնարավորություն կտա տասնյակ հայ ներդրողների ամբողջ աշխարհից միասին մասնակցել լայնածավալ գյուղատնտեսական ծրագրերի Ղարաբաղում և Հայաստանում և իրենց ներդրման դիմաց ստանալ զգալի և կայուն շահույթ: Կհաղթահարվեն ինֆորմացիայի, կապերի, վստահության և վերահսկողական մեխանիզմների պակասի պատճառով առաջացող սահմանափակումները, կամրապնդվի սփյուռքի հայության կապը հայրենի հողի հետ

- Իրականացնելու ենք տարբեր երկրներում գոյություն ունեցող ապակենտրոն տնտեսական գրասենյակների կոորդինացում՝ պարբերական հավաքների և համատեղ ծրագրերի մշակման ու իրականացման միջոցով

- Մշակելու և իրականացնելու ենք աշխարհում լայն տարածում ստացած քրաուդֆանդինգային մոդելով ծրագրեր ՀՀ-ում և ԼՂՀ-ում, որը թույլ կտա սահմանափակ ռեսուրսներ ունեցող, բայց հայրենիքում ներդրումներ իրականացնել ցանկացող հայերին համախմբել ջանքերը և մաս կազմել խոշոր ծրագրերի

Մեր հաջողության գրավականը՝ Հայաստանը որպես կամուրջ

- Հայաստանը կարող է ծառայել որպես դարպաս դեպի ՄՄ-ի արագ աճող շուկաները եվրոպական և այլ արևմտյան ընկերությունների համար
- Մենք չպետք որոնենք բաժանարար գծեր, այլ պետք է ստեղծենք համագործակցության և երկխոսության հնարավորություններ
- ԵՄ, ՄՄ, ԱՄՆ և Լատինական Ամերիկայի հայկական սփյուռքը հնարավորություն կտա դառնալ այս խոշորագույն տնտեսական բլոկների առևտրային կապերի աշխույժ կենտրոններից մեկը



Եվրոպական Միության և Մաքսային Միության (ներառյալ Հայաստանը) տնտեսական ակտիվությունը և երկու տնտեսական բլոկների երկկողմ առևտրի ծավալները 2012-ին

Հայաստանն ունի նպաստավոր միջավայր բիզնեսի...

- Պահանջվում է ընդամենը 3 քայլ և 8 օր բիզնես սկսելու համար
- Հայաստանը դասակարգվել է #37-րդը 189 երկրների շարքում գործարարությամբ զբաղվելու հեշտության տեսանկյունից; ՄՄ-ի ներկայիս անդամներից, ինչպես նաև Ֆրանսիայի և Իտալիայի նման տնտեսապես զարգացած երկրներից բավական առաջ է
- #6 բիզնես սկսելու և #5 գույքի գրանցման դյուրության տեսանկյունից
- #19 գործարար միջավայրի բարելավման տեմպերի տեսանկյունից
- #20 գործարարության համար բարենպաստ օրենդրական դաշտի տեսանկյունից *(Համաշխարհային Բանկ, 2013)*
- #12 աշխատանքի ընդունելու/ազատելու դյուրության և արդյունավետության տեսանկյունից *(Համաշխարհային Տնտեսական Ֆորում, 2013)*

ARMENIA		Europe & Central Asia		GNI per capita (US$)	3,720
Ease of doing business (rank)	37	Lower middle income		Population (m)	3.0
✓ **Starting a business** (rank)	6	**Registering property** (rank)	5	**Trading across borders** (rank)	117
Procedures (number)	2	Procedures (number)	3	Documents to export (number)	5
Time (days)	4	Time (days)	7	Time to export (days)	16
Cost (% of income per capita)	1.1	Cost (% of property value)	0.1	Cost to export (US$ per container)	1,885
Minimum capital (% of income per capita)	0.0			Documents to import (number)	8
		Getting credit (rank)	42	Time to import (days)	18
Dealing with construction permits (rank)	79	Strength of legal rights index (0–10)	6	Cost to import (US$ per container)	2,175
Procedures (number)	21	Depth of credit information index (0–6)	6		
Time (days)	84	Public registry coverage (% of adults)	21.9	**Enforcing contracts** (rank)	112
Cost (% of income per capita)	68.4	Private bureau coverage (% of adults)	63.8	Procedures (number)	49
				Time (days)	570
Getting electricity (rank)	109	**Protecting investors** (rank)	22	Cost (% of claim)	19.0
Procedures (number)	5	Extent of disclosure index (0–10)	6		
Time (days)	242	Extent of director liability index (0–10)	6	**Resolving insolvency** (rank)	76
Cost (% of income per capita)	98.9	Ease of shareholder suits index (0–10)	8	Time (years)	1.9
		Strength of investor protection index (0–10)	6.7	Cost (% of estate)	11
				Recovery rate (cents on the dollar)	36.4
		✓ **Paying taxes** (rank)	103		
		Payments (number per year)	10		
		Time (hours per year)	380		
		Total tax rate (% of profit)	38.8		

Համաշխարհային բանկի՝ գործարարությամբ զբաղվելու վերաբերյալ 2014 զեկույցը: Հայաստանը գրավիչ է մի քանի կարևոր չափանիշներով

… և ներդրումների համար

- #22 ներդրողների պաշտպանվածության տեսանկյունից *(Համաշխարհային Բանկ, 2013)*
  - Քաղաքական և տնտեսական կայունություն
  - Նպաստավոր ներդրումային օրենսդրություն և օտարերկրյա մասնակցության սահմանափակումների բացակայություն
  - Արտարժույթի ազատ փոխանակում
  - Շահույթի ազատ փոխանցում ներդրողի երկիր
  - Երաշխիքներ ներդրողների համար և պաշտպանություն օրենսդրության փոփոխություններից մինչև հինգ տարի
  - Արտահանման մաքսավճարի բացակայություն *(Զարգացման Հայկական Գործակալություն, 2013)*
  - Ներդրումների զարգացման և պաշտպանության երկկողմ պայմանագրեր 40 երկրների հետ
  - Ազատ առևտրի համաձայնագրեր ԱՊՀ երկրների հետ, որոնք սպասարկում են 250 միլիոնանոց շուկա
  - Կրթված, հմուտ և ընդունակ աշխատուժ
  - Էներգիայի մրցունակ գներ (Ներդրումային Ուղեցույց Հայաստան 2013)





Հայաստանում իրականացվող ներդրումներն ըստ երկների և ոլորտների, 2012

Հայաստանն ունի բարենպաստ հարկային միջավայր

- Պարզ հարկային համակարգ՝ ընդամենը 10 վճարում տարեկան; համեմատության համար՝ Կիպրոսում՝ 30, Ռումինիայում՝ 39
- Ցածր հարկեր ոչ-օֆշորային տարածքների համեմատ
  - ընդհանուր հարկային բեռը՝ 38.8%, Ռուսաստանում՝ 50.7%, Ֆրանսիայում՝ 64.7% *(PwC, 2013)*
  - **Հայաստանյան կառույցների/անձանց դիվիդենդները չեն հարկվում**
- Հնարավորություն կազմակերպել/ընդգրկվել Ազատ տնտեսական գոտիներում

Ազատ տնտեսական գոտիներ

- Չկա ԱԱՀ ԱՏԳ-ների տարածքում ապրանք/ծառայություն մատուցելիս
- Չկա շահութահարկ իրավաբանական անձանց, և եկամտահարկ անհատ ձեռներեցների համար
- Չկա գույքահարկ հասարակական և արտադրական կառույցների համար
- Չկա մաքսային վճար; ոչ-սակագնային միջոցներ են կիրառվում արտահանվող ապրանքի համար
- ԱՏԳ-ներում թույլատրվում է ազատ շրաջանառվող արտարժույթներով գործարքների իրականացում *(Ներդրումային Ուղեցույց Հայաստան 2013)*

Մեր գործառույթները

- Արտոնյալ պայմաններով գրասենյակային և ցուցահանդեսային տարածքների, անհրաժեշտ ենթակառուցվածքների տրամադրում Եվրոպայի և Շվեյցարիայի շուկաներում գործունեություն ծավալել ցանկացող կազմակերպություններին

- Մասնագիտացված կոնֆերանսների, ցուցահանդեսների և ֆորումների կազմակերպում Մաքսայի Միության, Եվրոպական Միության և այլ երկների արտադրողների ու գնորդների համար՝ միացնելով պահանջարկն ու առաջարկը

- Ներդրումների կազմակերպում դեպի Հայաստան և Ղարաբաղ; ազատ տնտեսական գոտիների ստեղծած առավելությունների էֆեկտիվ օգտագործում

- Հայաստանի և Մաքսային Միության անդամ երկների տնտեսությունների և գործարար հնարավորությունների վերաբերյալ բարձրակարգ հետազոտությունների կազմակերպում և հովանավորում

- Համաշխարհային տնտեսական և գործարար հեղինակություններ և կարծիք ձևավորող կառույցների հետ համագործակցություն՝ Հայաստանի ներուժն աշխարհին լավագույնս ներկայացնելու համար

3,800քմ գերազանց կահավորված գրասենյակային, ցուցահանդեսային և կոնֆերանս տարածքներ

Սա համահայկական ծրագիր է, որտեղ Ձեր մասնակցությունը ողջունելի է

- Մենք բանակցում ենք խոշորագույն հայ գործարարների հետ ամբողջ աշխարհում՝ ծրագրին նրանց մասնակցությունն ապահովելու համար

- FEDA-ի գործունեության համար անհրաժեշտ նախնական ներդրումն իրականացրել են Եվրոպայի հայ գործարար շրջանակները՝ տրամադրելով մեր՝ €12մլն արժողությամբ բիզնես կենտրոնը

- Ձեր մասնակցությունը հնարավոր է հետևյալ տարբերակներով՝

  - FEDA-ին պարբերական նյութական աջակցություն, որը Ձեզ իրավունք կտա ընդգրկվել մեր՝ Հոգաբարձուների խորհրդում՝ հայազգի ակնառու գործարարների և տնտեսական ոլորտի ՀՀ բարձրաստիճան պատասխանատուների հետ միասին

  - Ձեր ընկերության համար գրասենյակային և ցուցահանդեսային տարածքների երկարաժամկետ ու կարճաժամկետ վարձույթ մեր բիզնես կենտրոնում՝ արտոնյալ գներով՝ ծննի և հարակից տարածքների շուկայական գներից շատ ավելի ցածր

  - Ձեր գործունեությանը վերաբերող ցուցահանդեսների, կոնֆերանսների և այլ միջոցառումների կազմակերպում

Կապվե՛ք մեզ հետ FEDA ծրագրին Ձեր կազմակերպության մասնակցությունն ապահովելու կամ ծրագրին վերաբերող ցանկացած այլ հարցերով

Տնօրեն՝ Հայկ Հովհաննիսյան
Հեռախոս՝ + 33 6 77 56 57 99
Էլ. փոստ՝ director@feda-europe.eu
Կայք՝ www.feda-europe.eu
Հասցե՝ 165 Edouard Branly, Saint-Genis-Pouilly, FRANCE - 01630

Հղումներ

- *Doing Business 2013: Smarter Regulation for Small and Medium-Size Enterprises* | The World Bank, 2013
- *Doing Business 2014: Understanding Regulations for Small and Medium-Size Enterprises* | The World Bank, 2013
- *The Global Competitiveness Report 2013-2014: Full Data Edition* | World Economic Forum, 2013
- *Paying Taxes 2014: The global picture. A comparison of tax systems in 189 economies worldwide* | PwC, 2013
- *Investment Guide Armenia 2013* | Ministry of Economy of the Republic of Armenia
- *Armenian Development Agency* | www.ada.am